

## Կարծիք

### «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերի վերաբերյալ

ՀՀ արդարադատության նախարարության կողմից 2021 թվականի դեկտեմբերի 14-ին հանրային քննարկման են դրվել «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքներում փոփոխություններ կատարելու մասին օրենքների նախագծերը<sup>1</sup>:

Նախագծերով, ըստ էության, առաջարկվում է սահմանել դատավորների անհամատեղելիության լրացուցիչ պահանջ՝ պայմանավորված դատավորի կողմից մարդու հիմնարար իրավունքի՝ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային դատարանի կամ այլ միջազգային ատյանի կայացրած ակտով արձանագրված միտումնավոր խախտում կատարելու փաստով: Միաժամանակ առաջարկվում է սահմանել նշված անհամատեղելիության պահանջի խախտումը՝ որպես Բարձրագույն դատական խորհրդի կողմից դատավորի լիազորությունները դադարեցնելու հիմք:

Իրավաչափ համարելով ՀՀ դատական օրենսգրքով և հարակից օրենքներով լրացուցիչ անհամատեղելիության պահանջների սահմանման հնարավորությունը՝ այնուամենայնիվ, գտնում ենք, որ առաջարկված լուծումները խնդրահարույց են թե՛ ՀՀ Սահմանադրության և թե՛ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջների տեսանկյունից:

ՀՀ-ի մասնակցությամբ միջազգային դատարանի ակտով արձանագրված մարդու հիմնարար իրավունքի միտումնավոր խախտումը, ըստ առաջարկվող խմբագրության, անմիջականորեն հանգեցնելու է դատավորի լիազորությունների դադարեցմանը: Ընդ որում, խախտման միտումնավոր լինելու կամ չլինելու հանգամանքը համատասխան դատական ակտով արձանագրման ենթակա չէ, ինչից ենթադրվում է, որ միտումնավորության գնահատումն իրականացվելու է Բարձրագույն դատական խորհրդի կողմից:

Նման կարգավորման պայմաններում դատավորի լիազորությունների դադարեցումը տեղի է ունենում ոչ թե կարգապահական վարույթի, այլ՝ դատավորի լիազորությունները դադարեցնելու վարույթի շրջանակներում, որի պայմաններում անորոշ է մնում տվյալ ընթացակարգի շրջանակներում դատավորի արդար դատաքննության իրավունքի երաշխիքների ապահովման հարցը (դատավորի լիազորությունները դադարեցնելու վարույթի նկատմամբ կիրառվում են («mutatis mutandis») Դատական օրենսգրքի 19-րդ գլխի կանոնները այնքանով, որքանով կիրառելի են, և եթե այլ բան սահմանված չէ նույն գլխով): Այս վարույթի շրջանակներում կիրառելի չեն կարգապահական վարույթին հատուկ՝ կարգապահական խախտումների որակմանն առնչվող չափանիշները, այդ թվում՝ նրանք, որոնք հնարավորություն են տալիս որպես կարգապահական խախտում չդիտարկել այն արարքները, որոնք ձևականորեն

<sup>1</sup> <https://www.e-draft.am/projects/3817/justification>

պարունակում են Դատական օրենսգրքով սահմանված՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի հատկանիշները, սակայն նվազ կարևորության պատճառով կասկածի տակ չեն դնում տվյալ դատավորի համապատասխանությունը դատավորի կարգավիճակին և իրենց էությանը չեն կարող հեղինակազրկել դատական իշխանությունը:

Նման պայմաններում, երբ նկարագրված խախտումը, առանց որևէ տարբերակման, այդ թվում՝ խախտման բնույթը, հետևանքները, գործի առանձնահատկությունները և գործի այլ անհատականացնող հանգամանքները հաշվի առնելու, անմիջականորեն հանգեցնում է դատավորի լիազորությունների դադարեցմանը, առերևույթ խնդրահարույց է իրավունքի սահմանափակման համաչափության տեսանկյունից և ենթադրում է սահմանված կարգավորման՝ բոլոր դեպքերի նկատմամբ ավտոմատ կիրառման պարտականություն:

Գտնում ենք, որ գործող Սահմանադրության պայմաններում դատավորների վեթինգի/գնահատման գործընթացը պետք է իրականացնի օրենքի հիման վրա ստեղծված նոր, անկախ երկաստիճան կառուցվածք ունեցող մարմին՝ հանձնաժողով, որը բաղկացած կլինի հանրային լայն վստահություն և մասնագիտական բարձր հեղինակություն վայելող իրավաբան-մասնագետներից, փաստաբաններից, իրավապաշտպաններից, որոնց առաջադրման ընթացակարգը պետք է լինի առավելագույնս պարզեցված, այդ թվում՝ ներառի ինքնառաջադրման հնարավորություն: Մինչև ժամանակ այդ մարմինը չի կարող կայացնել դատավորի լիազորությունները դադարեցնելու մասին որոշում, քանի որ Սահմանադրությամբ այդ բացառիկ իրավասությունը վերապահված է Բարձրագույն դատական խորհրդին: Հետևաբար հանձնաժողովի գործունեությունը պետք է եզրափակվի ստուգման արդյունքում տրվող եզրակացությամբ, համապատասխան դատավորի լիազորությունը դադարեցնելու միջնորդությամբ Բարձրագույն դատական խորհուրդ դիմելով և ԲԴԽ հրավիրած նիստում մրցակցային պայմաններում այդ միջնորդությունը պաշտպանելով: Հանձնաժողովի միջնորդության քննարկումը դոնբաց նիստում պետք է իրականացվի հանրային լայն վերահսկողության երաշխիքների ապահովման պայմաններում՝ նվազագույնի հասցնելով հնարավոր չարաշահումների ռիսկը: Հանձնաժողովն իր հերթին պետք է ձևավորվի Ազգային ժողովի կողմից՝ գոյություն ունեցողներից առավել բարձր ցենզի հաղթահարմամբ: Ստուգման չափանիշները պետք է հստակ սահմանված լինեն օրենսդրությամբ և կարող են վերաբերել դատավորի ունեցվածքի ծագումնաբանությանը, հանցավոր կապերին և մասնագիտական որակներին:

***Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ***